ԲԱԺՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ

1. Իրականացնում է կրթահամալիրի ամբիոնների գիտահետազոտական և գիտամեթոդական գործունեության ընթացիկ պլանավորման և կատարման վերահսկողություն, օժանդակում է նշված աշխատանքների կատարմանը:
2. Կազմակերպում է ասպիրանտների ընդունելությունը, ինչպես նաև վերահսկում է ուսումնառության աշխատանքները:
3. Համագործակցելով համապատասխան ստորաբաժանումների հետ ապահովում է կրթահամալիրի գիտամանկավարժական կազմի գիտահետազոտական և գիտամանկավարժական համագործակցությունը ՀՀ ոստիկանության համապատասխան ստորաբաժանումների, ՀՀ և արտերկրի այլ բուհերի, գիտաուսումնական հաստատությունների հետ:
4. Աջակցում է կրթահամալիրի գիտամանկավարժական կազմի հոդվածների և գրքերի հրատարակման գործընթացին:
5. Համագործակցելով կրթահամալիրի ամբիոնների հետ՝ կազմակերպում և անցկացնում է գիտաժողովներ և կոնֆերանսներ, այդ թվում՝ թմրամոլության և թմրաբիզնեսի դեմ պայքարին նվիրված սեմինարներ, համաժողովներ, կլոր սեղաններ և այլ գիտական բնույթի միջոցառումներ:
6. Տալիս է կրթահամալիրի հրատարակությունների վերաբերյալ երաշխավորություն:
7. Համագործակցում է իրավապահ մարմինների համակարգում գործող հատուկ ուսումնական հաստատությունների կազմում ստեղծված թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության, թմրամոլության կանխարգելման հետ կապված հարցերն ուսումնասիրող այլ ստորաբաժանումների հետ:
8. Ամփոփում և Կրթահամալիրի ղեկավարությանն է ներկայացնում Կրթահամալիրի գիտական գործունեության և գիտական խմբակների գործունեության վերաբերյալ համապատասխան հաշվետվություններ:
9. Կազմակերպում, համակարգում և իրականացնում է կրթահամալիրի գիտական ամսագրի նախապատրաստական, հոդվածների հավաքման, հրապարակման, առաքման և ամսագրի կայքի պարբերաբար թարմացման աշխատանքները: